ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

UFAR-25/02 - Ինտերիերի և ինժեներական համակարգերի նախագծման ծառայություններ Հայաստանում Ֆրանսիական Համալսարան (ՀՖՀՀ)

Հայաստանում Ֆրանսիական Համալսարանը (ՀՖՀՀ) հրավիրում է որակավորված ճարտարապետական և ինժեներական թիմերին ներկայացնել առաջարկներ ՀՖՀՀ-ի նոր շենքի ինտերիերի և ինժեներական համակարգերի նախագծման ծառայությունների մատուցման համար: Շենքը գտնվում է Երևան քաղաքում՝ Աբովյան փողոցում, մոտավոր 5,579 մ² ընդհանուր մակերեսով, ինչպես նաև ընդհանուր օգտագործման տարածքներով:

Ծառայությունների ծավալը ներառում է.

- Ինտերիերի և ինժեներական համակարգերի նախագծում (կոնստրուկցիա, ՋԳՄՕ, էլեկտրամատակարարում, BMS, արևային համակարգեր և այլն)
- Տարածքի պլանավորում, հատակագծում և եռաչափ տեսապատկերներ
- Թույլտվությունների և մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթ
- Նախահաշվի կազմում
- Հեղինակային հսկողություն

Իրավասության չափանիշներ.

- Որակավորում/լիցենզիա ճարտարապետական նախագծման ծառայությունների համար ՀՀ-ում
- Առնվազն 5 տարվա փորձ հասարակական կամ առևտրային շենքերի նախագծման ոլորտում
- Փորձ միջազգային հաստատությունների և կայուն դիզայնի հետ համագործակցման մեջ (ցանկալի է)
- ՀՀ շինարարական նորմերին և կարգավորումներին տիրապետում

Առաջարկը պետք է ներառի՝

- Հատակագծերով և եռաչափ պատկերներով հայեցակարգային նախագիծ
- Նախնական արժեքի բաժանված հաշվարկ ըստ բաժինների
- Մեթոդաբանության և առաջարկվող ժամանակացույցի բացատրական նամակ
- Վճարային առաջարկ (նախագծում և հեղինակային հսկողություն)
- Թիմի կառուցվածքը և հիմնական մասնագետների ինքնակենսագրականները (CV)
- Նախկին փորձի ցուցակ և հղումներ
- Պարտադիր փորձաքննությունների և ուսումնասիրությունների արժեքները պետք է հստակ նշված լինեն

Ներկայացման մանրամասներ.

- **Վերջնաժամկետ՝** 2025 թվականի հունիսի 30, ժամը 23:59, Երևանի ժամանակով
- **Ներկայացման հասցե՝** *daf@ufar.am* և *achats@ufar.am*՝ մեկ էլ. նամակով
- Բոլոր հարցերն անհրաժեշտ է ուղարկել գրավոր՝ վերոնշյալ էլ. հասցեներին: Բանավոր քննարկումների կամ շենքի այցելության անհրաժեշտության դեպքում ՀՖՀՀ-ն կկապվի մասնակիցների հետ:

Գնահատման գործընթաց.

- Համապատասխանության ստուգում
- Տեխնիկական և ֆինանսական գնահատում
- Հարցազրույցներ / պարզաբանումներ (անհրաժեշտության դեպքում)
- Պայմանագրային բանակցություններ առավելագույն գնահատական ստացած մասնակիցի հետ

ՀՖՀՀ-ը իրեն իրավունք է վերապահում ցանկացած պահին փոփոխել կամ չեղարկել մրցութային գործընթացը: Բոլոր առաջարկները դիտարկվելու են ըստ ներքին կանոնակարգի, որի մասին կարճ ցուցակ անցած մասնակիցները կտեղեկացվեն արդյունքների ամփոփումից հետո:

10 rue Davit Anhaght
0037 Erevan, Arménie
info@ufar.am
rectorat@ufar.am
+374 010 249 647
+374 010 249 645